ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 մայիսի 2015 թվականի **թիվ 4** քաղ. Բուրաբայ

Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների արտադրությունը զարգացնելու համար պայմաններ ստեղծելու մասին

Հիմնվելով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում (այսուհետ՝ անդամ պետություններ) գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների արտադրության վիճակի վերլուծության արդյունքների վրա, գիտակցելով գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների արտադրության ոլորտում անդամ պետությունների միջեւ արդյունաբերական, գիտատեխնիկական եւ նորարարական համագործակցության զարգացման համար պայմաններ ստեղծելու կարեւորությունը՝ Եվրասիական միջկառավարական խորհուրդը **որոշեց՝**

1. Անդամ պետություններին՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ համատեղ մինչեւ 2015 թվականի նոյեմբերի 1–ը մշակել եւ Եվրասիական միջկառավարական խորհրդի քննարկմանը ներկայացնել Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումների նախագծեր, որոնցով նախատեսվում է՝

անդամ պետություններում երրորդ երկրներում արտադրվող՝ գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների կոմպլեկտավորող տարրերի անալոգների արտադրության կազմակերպմանն ուղղված միջոցառումների մշակում.

Առեւտրի համաշխարհային կազմակերպության նորմերին եւ կանոններին համապատասխանող՝ անդամ պետությունների՝ գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների՝ դեպի երրորդ պետությունների շուկաներ արտահանումը զարգացնելուն ուղղված միջոցառումների մշակում, այդ թվում՝ գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների արտահանման համար ֆինանսական աջակցության միջոցներ:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիային՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված առաջարկների հիման վրա մինչեւ 2015 թվականի նոյեմբերի 1-ը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի քննարկմանը ներկայացնել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի հանձնարարականի նախագիծը, որով նախատեսվում է՝

Եվրասիական տնտեսական միության տարածքում արտադրված՝ գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների պահանջարկի խթանում, մասնավորապես, գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների լիզինգի մեխանիզմը զարգացնելու միջոցով.

Եվրասիական տնտեսական միության տարածքում գյուղատնտեսության նպատակներով մեքենաների եւ սարքավորումների կիրառման տնտեսական արդյունավետության չափանիշների մշակում՝ անդամ պետություններում դրանց կիրառության արդյունավետությունը բարձրացնելու համար պայմաններ ստեղծելու նպատակով:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**